Արձանագրություն 2

«Վեդու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/12 » ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Վեդի

23. 03.2022թ.
ժամը 10:30

Հանձնաժողովի նախագահ

- **Ս. Խաչատրյան** - «Վեդու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն (հանձնաժողովի նախագահ)

Հանձնաժողովի անդամներ

Հ. Գաբրիելյան- ՓԲԸ-ի հաշվապահ (հանձնաժողովի անդամ)
Ա. Հակոբյան -ՓԲԸ-ի մեխանիկ (հանձնաժողովի անդամ)
Գ. Գաբրիելյան - ՓԲԸ-ի հաշվապահ (հանձնաժողովի անդամ)
Լ. Գևորգյան- ՓԲԸ-ի համակարգչային օպերատոր (հանձնաժողովի անդամ)

Քարտուղար-Գնումների համակարգող Գ. Ամիրջանյան

1. «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/12 » ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի վերաբերյալ

(Ս. Խաչատրյան)

1.1 Հայտերը բացվել են www. armeps.am համակարգի միջոցով՝ սույն թվականի մարտի 23-ին, ժամը 10:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամ-կետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Տեղեկատվություն գնվելիք ապրանքի գնի և հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ս. Խաչատրյան)

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման գործընթացի» կարգի 40-րդ դրույթներով, հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնվելիք ապրանքների գինը մեկ թվով արտահայտված:

Հ/հ	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գինը
1	2	3
1	Թուղթ A 4 Ֆորմատի (210x297)	325000
2	Թղթապանակ-ռեգիստր	42500
3	Արագակար	3500
4	Հաշվասարք, գրասենյակային	9600
5	Դակիչ միջին	2000
6	Գրիչ գնդիկավոր կապույտ	10000
7	Գրիչ գնդիկավոր կարմիր	5000
8	Գրիչ գնդիկավոր սև	2000
9	Ռետին հասարակ	2000
10	Մատիտներ	7500
11	Սոսինձ-մատիտ 15գր	7200
12	Քանոն, պլաստիկ, 30սմ	5000
13	Թերթիկներ նշումների համար, կպչուն	4000
14	Մկրատ, գրասենյակային	4700
15	Ամրակ, միջին	1250
16	Տերմո (ջերմային ՀԴՄ) թուղթ	10500

17	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	4000
18	Նամակի ծրար, A4 ձ—աչափի	3600
19	Նամակի ծրար, A5 ձ—աչափի	1000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Սահմանված ժամկետում հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել 2 մասնակից

h/h	Մասնակցի անունը	Տվյալները
1	«Սմարթլայն» ՍՊԸ	ՀՎՀՀ 01548908, էլ. հասցեն՝ ssmartline@mail.ru, ք. Երևան, Վարդանանց 110, հեռ. 055-30-00-93
3	«ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ	ՀՎՀՀ 01237057, էլ. հասցեն՝ agalstyanurartu@,mail.ru, ք. Երևան, Հանրապետության 61, հեռ. 095-60-55-65

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտերի փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Ս. Խաչատրյան)

4.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված հիմնավորումների մասին

(Ս. Խաչատրյան)

5.1 «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

6. ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգը թիվ 1, 3 և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ա. Խաչատրյան)

6.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետի դրույթներով ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգը թիվ 1, 3 և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

7. Մասնակիցների առաջարկած գների մասին.

(Ս. Խաչատրյան)

7.1 Մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում: Մասնակիցներից «Սմարթլայն» ՍՊԸ -ն և «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ -ն 9-րդ չափաբաժնի մասով ներկայացրել են միանման գնային առաջարկ:

14 և 16-րդ չափաբաժինների մասով «Սմարթլայն» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները գերազանցում է նախահաշվային արժեքը:

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի « բ » պարբերության դրույթներով, կասեցնել հանձնաժողովի նիստը և հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել 9-րդ (միանման գնային առաջարկ) և 14-րդ ու 16-րդ չափաբաժինների մասով (նախահաշվային գնից բարձր) գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Բանակցությունների ժամանակահատված է սահմանվում 2022թ. մարտի 25-ին ժամը 13:00-13:30: Գնային առաջարկները էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված մասնակիցները կարող են ուղարկել amirjanyan1966@mail.ru էլեկտրոնային հասցեին: Մինչև սահմանված վերջնաժամկետը մասնակիցների ներկայացված գնային առաջարկները հրապարակվելու են այլ մասնակիցների համար, և մասնակիցը մինչև սահմանված վերջնաժամկետը իրավունք ունի վերանայելու իր կողմից ներկայացված գնային առաջարկը: Սահմանված ժամկետից հետո ներկայացված գնային առաջարկները հաշվի չեն առնվելու:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

8.1 ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/12» ծածկագրով ընթացակարգի բանակցությունների վարման հանձնաժողովի նիստ հրավիրել 25.03.2022թ. ժամը 13:00-ին, հասցեն՝ ք.Վեդի, Գայի 2 հասցեում, հաշվապահություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Գաբրիելյան

_____ Ա.Հակոբյան

_____ Գ. Գաբրիելյան

_____ Լ. Գևորգյան

Քարտուղար՝ _____ Գ. Ամիրջանյան